




ՊՐԱԳ. ՀԱԿՈՒ ՄԱՆԱՆԴՅԱՆ

9(47.925.)|

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

A^{III}
2539

I

Արտատպ. Հ. Ս. Խ. Հ. Գիտություն յեւ Արվեստի ինստիտուտի
Տեղեկագրի № 2-ից:



ՊՐՈՖ. ՀԱԿՈՒ ՄԱՆԱՆԴՅԱՆ

ՆՅՈՒԹԵՐ ԷԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆԲԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ¹

1. Շիրակացու կեիւոցերը յեւ պայուասիկ»-ը

Անանիա Շիրակացին «Յաղագս կշռոց և չափուց» դրվածքի մեջ ունի «պայուասիկ» բառը հետևյալ հատվածում.

«Դրամ ըստ պարսկական լեզուին անուանեցաւ և յարծաթ ոչ (յարծաթոջ?) տպաւորեցաւ, որ է ձ մասն լտեր. և սատեր զ դրամաց կշիռ. և պայուասիկն ծ լիտր է, որ է ո սատեր, որ լինի և դրամի կշիռ և թիւ» (տես Անանիայի Շերակունույ, Միացորդք բանից, ի լոյս ած Բ. Պ., Ս. Պետերբ. 1877, էջ 28—29)։ Ծանոթության մեջ Բ. Պատկանյանը յենթադրում և ամբողջ այս հատվածն աղճատված և հարկ և համարում ուղղելու «Հատուածս այս,—ասում ե նա,—լի է վրիպակօք և ըստ կարծեաց Հ. Աւգերեանի միջանկեալ թուի լինել և ոչ Շիրակացուն. տես կշռոց են յեր. 26: Մեք զայս ձև օրինակի տամք բնագրին.—Դրամն է յնգ մասն լտեր (այն է ծք դարեհաս). և սատեր է զ դրամաց կշիռ. և պայուասիկն ծ լիտր է, այն է (960, կամ մերձաւորապէս) ո սատեր, որ լինի (3840, կամ մերձաւորապէս) և դրամակշիռ: Յաղագս պայուասիկի տես ի Պատմ. Սերէոսի, դլ. լէ. զի անդէն ի նոցանէ միոյ միոյ ամի առնուն յկե պայուասիկ (ի ձեռագիր օրինակին մեր՝ պայուասիկ) դրամս»


Բ. Պատկանյանի այս ուղղումը միանգամայն սխալ է։ Անանիա Շիրակացու բնագիրը վոչ միայն ուղիղ է, այլ և խիստ ուշագրավ ու հետաքրքիր մի վկայութիւն և, վոր հնարավորութիւնն ե տալիս վորոշելու թե «պայուասիկ»-ը և թե Շիրակացու մյուս կշիռներն այժմյան կիլոգրամներով։

Շիրակացու ժամանակ բաղմաղան ու տարբեր սխտեմի կշիռներ կային, ուստի և խիստ դժուար եր վորոշել, թե վոր լիտրը և տաղանդը հիմք ե ընդունվել Շիրակացու դրվածքում։ Վերոհիշյալ հատվածը, վոր համարվել ե աղճատված՝ մոչ միայն աղճատված չե, այլ խիստ կարեւոր մի վկայութիւնն ե, վորով լուսաբանվում են Շիրակացու բոլոր կշիռները։

Շիրակացու. վկայության մեջ՝ «դրամ ըստ պարսկական լեզուին անուանեցաւ և յարծաթոջ ² տպաւորեցաւ, որ է ձ մասն լտեր»՝ ի նկատի յե

¹ Այս վերնագրի տակ նյութերից առայժմ հրատարակվում ե մի փոքր մասը, վոր կարգացված ե Գիտության և Արվեստի Ինտիտուտի պատմական-հասարակագիտական բաժնի նիստում 1927 թ. հունվարի 20-ին։

² Բնագրի «յարծաթ ոչ» տեղը ե ուղղել «յարծաթոջ»։



առնված, անտարակույս, Սասանյան արծաթ դրամը, վորի կշիռը, ինչպես հայտնի յե, մոտավորապես, չորս գրամ եր ¹:

Յեթե Սասանյան արծաթ դրամը կազմում էր լիտրի $\frac{1}{80}$ -ը մասը՝ միանգամայն պարզ ե, վոր Շիրակացու լիտրը հռոմեական սիստեմի լիտրն ե, վորը, ինչպես հայտնի յե, բարեկունական տաղանդի $\frac{1}{100}$ մասն էր և հավասար եր այժմյան կշռով 326,4 գրամի ²:

Այդ լիտրը հենց սովորական եր Բյուզանդական կայսրության մեջ և նրա ճիշտ կշիռը պետք ե ուրեմն ընդունել վոչ թե մոտ 324 գրամ, ինչպես ունեն Ch. Diehl-ը ³ և Հ. Որբելին ⁴, այլ 326,4 գրամ:

Սասանյան արծաթ դրամը, լինելով $\frac{1}{80}$ -ը լիտր, հավասար ե յեղեղ, ուրեմն, ասորական drachmê-յին և ատտիկյան թույլ drachmê-յին և նրա իսկական ու ճիշտ կշիռը յեղել ե 4.08 գրամ:

Շիրակացու լիտրի և դրամի ճշտմամբ վորոշվում են այնուհետև այժմյան դրամներով՝ ինչպես նրա հիմնական բոլոր կշիռները, նույնպես և պարսկական «պայուսահի»-ը: Ստացվում ե կշիռների վոչ թե մոտավոր, այլ միանգամայն ճիշտ հաշիվը, վոր հետևյալն ե.

1 լիտր=12 ունկի=72 դահեկան=80 պարս. դրամ՝ 326,4 գրամ.

1 ունկի= $\frac{1}{12}$ լիտր=6 դահեկան= $6\frac{2}{3}$ պ. դրամ՝ 27,2 գրամ.

1 սիկղ= $\frac{1}{48}$ լիտր= $\frac{1}{4}$ ունկի= $\frac{1}{2}$ դահ.= $1\frac{1}{3}$ պ. դրամ՝ 6,8 գրամ.

1 դահեկան= $\frac{1}{72}$ լիտր= $\frac{1}{6}$ ունկի= $\frac{1}{9}$ պ. դրամ՝ $4,53\frac{1}{3}$ գրամ.

1 պ. դրամը= $\frac{1}{80}$ լիտր= $\frac{3}{20}$ ունկի= $\frac{9}{10}$ դահեկան՝ 4,08 գրամ.

1 սատեր=4 դրամ՝ 16,32 գրամ. ⁵

1 կենդինար=100 լիտր՝ 32 կիլ. 640 գրամ.

1 տաղանգ=125 լիտր=9000 դահեկան=40 կիլ. 800 գրամ.

1 «պայուսահի»=50 լիտր=1000 սատեր=4000 պարս. դրամ (եղեղ և թիւ)՝ 16 կիլ. 320 գրամ:

Պարսկական «պայուսահի»-ը, ինչպես տեսնում ենք, հավասար ե յեղել $\frac{1}{2}$ կենդինարի:

Սերեոսը, խոսելով մարաց ապստամբության մասին արարական ծանր

¹ Տե՛ս E. A. Пахомов, Монетные клады Азербайджана. Труды Общ. общл. и изуч. Азербайджана. Вып. 3, Баку 1926. Նաև իմ «Հայաստանի արքունի հարկերը մարգպանության շրջանում», Տեղեկագիր Հ. Ս. Խ. Հ. Գրա. և Արվ. Ինստիտուտի, Յերևան 1926, № 1, էջ 11 ծանոթ.:

² Տե՛ս J.-A. Decourdemanche, Traité pratique des poids et mesures des peuples anciens et des Arabes. Paris 1909, էջ 22.

³ Ch. Diehl, Justinien et la civilisation byzantine au VI siècle. Paris 1901, էջ 537.

⁴ Տե՛ս I. A. Орбели, Вопросы и решения вардапета Анании Ширакца, Петроград 1918, էջ 65.

⁵ Decourdemanche, էջ 24.

⁶ Ի նկատի ե առնված ասորական stater-ը, վորի կշիռը յեղել և իրոք 16,32 գրամ: Անանիա Շիրակացու մոտ (էջ 27) հիշատակված ե նաև մի ուրիշ ոստեր՝ քրտա ներայեցուց, վորը կազմում ե ունկիի $\frac{1}{6}$ մասը, ուրեմն՝ 3,4 գրամ: Սատերների այս տարբերությունն և, վոր շփոթեցրել ե Բ. Պատկանյանին և հիմք ծառայել նրա վերահիշյալ սխալ յենթադրության:

հարկապահանջության պատճառով, հիշում ե նույն այս «պայուսակ»-ը հետեյալ հատվածում. «Բանգի ոչ կարացին համբերել դառն և դժնդակ ծառայութեանն և հարկին ծանրութեանն՝ որ ի վերայ նոցա, զի անդրէն ի նոցանն միոյ միոյ ամի առնուին յկե պայուսակ դրամ. և որ ոչն կարէր տալ, առնուին ընդ միոյ միոյ դրամի մարդ մի, և ի ըրաց բարձին զհեծելութիւն և զիշխանութիւն աշխարհին» (Պետերբ. 1879, գլ. 1է, էջ 147):

«Պայուսակ»-ը վերե տրված հաշվով հավասար եր 4600 Սասանյան արծաթ դրամի = 16 կիլ. 320 գրամ, ուրեմն՝ Մարաստանի հարկը, լինելով յկե «պայուսակ», անում ե $365 \times 4000 = 1.460.000$ Սասանյան արծաթ դրամ, իսկ նրա կշիռը = $365 \times 16,320 = 5956$ կիլոգր. 800 գրամ:

«Պայուսակ»-ի կշիռը, նաև նրա գրամական քանակը, ինչպես տեսնում ենք, շատ պարզ վորոշվում ե:

«Պայուսակ»-ի ու Սասանյան արծաթ դրամի կշիռների ճշտումը կարեորդ ու ուշագրավ ե այն տեսակետից, վոր հնարավորություն և տալիս լուսաբանելու արաբական աղբյուրների այն վկայությունները, վոր վերաբերվում են Սասանյան Պարսկաստանի յեկամուտներին ու հարկերին:

Որինակ՝ Տաբարիի մոտ հանդիպում են մի քանի անդամ դրամական խոշոր գումարների հաշիվներ, վորոնց մեջ հիշատակված ե, իմ կարծիքով, հենց նույն այս «պայուսակ»-ը, վոր Noeldeke-ն թարգմանել ե Beutel¹: Տաբարիի այդ վկայություններից յերեւում ե, վոր «պայուսակ»-ն իբրև դրամական մեծ կշիռ նույնքան տարածված ու սովորական ե յեղել Սասանյան Պարսկաստանում, ինչպես «կենդինար»-ը Բյուզանդական կայսրության մեջ:

Տաբարիի պատմելով, խոսքով Պարվեզն իր թագավորության 18-րդ տարում (607/8 թվին) կարգադրել եր հաշվել պետական ամբողջ մուտքը, վոր ստացվել եր իր յերկիրների հարկերից և յեկամուտների ուրիշ բոլոր աղբյուրներից: «Նրան զեկուցանում են,—վկայում ե Տաբարին,—վոր այդ տարում նրա յեկամուտները հոգային հարկից ու մյուս աղբյուրներից կշռում են կտրված փողով 420 միլիոն „mithqāl“ և այդ գումարը, հաշվելով 10 „dirham“—ը 7 „mithqāl“, անում ե 600 միլիոն „dirham“: Նա հրամայում ե այդ փողը տանել գանձատուն, վոր ինքը կսուղեցել եր Տիգրանում և անվանել Բահար... խոսքով: Նույն տեղը բերում են հին դրամներով, վոր կտրել հյին Հազկերտի վորդի Պերոզը և Պերոզի վորդի Կավադը, 12.000 Beutel՝ յուրաքանչյուր Beutel-ը կտրված փողով 4000² „mithqāl“, ուրեմն՝ ընդամենը 48 միլիոն „mithqāl“, վոր 7 առ 10 հարաբերությամբ անում ե $68.571.428 + \frac{1}{2} + \frac{1}{3}$ „dirham“³:

Th. Noeldeke-ն յենթադրում ե, վոր mithqāl-ն այստեղ, հավա-

¹ Տես Th. Noeldeke, Tabari, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden, Leyden 1879, էջ 355, 376 և 377:

² Տաբարիի գերմաներեն թարգմանության մեջ սպված ե 40,000, վոր պարզապես զրկակ ե:

³ Տես Th. Noeldeke, Tabari, էջ 355-356:

նորեն, պետք է հասկանալ իբրև Սասանյան արծաթ դրամի կշիռ։ Այս յենթադրությունը հաստատվում է, իմ կարծքով, «պայուսակ» կշռի վերահիշյալ վորոշմամբ։ Տաբարիի վկայությունների մեջ Beutel-ի կշիռը «կարված դրամով» 4000 „mithqāl“¹ է, իսկ Շիրակացու մոտ, ինչպես տեսանք, «պայուսակ»-ը «լինի 4000 դրամի կշիռ և թիւ»։ Այս համեմատությունից կարելի չէ հետեցնել, վոր Beutel-ը համապատասխան լինելով «պայուսակ»-ին, „mithqāl“²-ը ևս գործ էածված նույն վկայություններում Սասանյան արծաթ դրամի կշռի իմաստով։

«Պայուսակ»-ի ու Սասանյան արծաթ դրամի կշիռները, ինչպես տեսանք, այժմյան գրամներով հավասար ելին, առաջինը՝ 16 կիլոգր. 370 գր., իսկ յերկրորդը՝ 4,08 գր.։ Ուրեմն՝ այս կշիռների համաձայն Սասանյան Պարսկաստանի ընդհանուր յեկամուսը 606/7 թվին պետք է ընդունել $420.000.000 \times 4,08 = 1.713.600$ կիլոգրամ Սասանյան արծաթ դրամ կամ 105.000 «պայուսակ»։

Հիմնվելով դրամագետ Pertsch-ի հաղորդած տվյալների վրա և ընդունելով Սասանյան դրամի արծաթի արժեքը մոտ 70 պֆեննինգ կամ 86 սանտիմ, իսկ արաբականինը (հնադույն շրջանի)՝ մոտ 40 պֆեննինգ կամ 50 սանտիմ՝ Th. Noeldeke-ն Սասանյան Պարսկաստանի ընդհանուր յեկամուսը 606/8 թվին հաշվում է՝ Սասանյան «գրամ»-ով՝ մոտ 294 միլիոն մարկ կամ 360 միլիոն ֆրանկ, իսկ արաբական «գրամ»-ով՝ միայն 240 միլիոն մարկ կամ 300 միլիոն ֆրանկ²։ Այս յերկու հակասական թվերից Noeldeke-ն հավանական է համարում առաջինը։

Arthur Christensen-ը իր „L'empire des Sassanides“ (Kobenhavn 1907, էջ 58) աշխատության մեջ հիմնվել է Նյուդեկեյի նույն այս հաշիվների վրա, սակայն առանց վորեւեւ բացատրության գերադասություն և ավել յերկրորդ թվին, ընդունելով արաբական դրամի արծաթի արժեքը 50 սանտիմ³։

Ադուֆ Կրեմերը, վոր ոգտվել է Իբն Խորդադեբհի և Կոդամայի աղճատված վկայություններից, Սասանյան Պարսկաստանի ընդհանուր յեկամուսը 606/7 թվին յենթադրում է 420—600 միլիոն „dirham“, անուշադիր թողնելով „mithqāl“⁴-ի և „dirham“⁵-ի 7-ը առ 10-ը հարաբերությունը՝ 420 միլիոն „mithqāl“⁶ = 600 միլիոն „dirham“ (Culturgeschichte des Orients unter den Chalifen, Wien 1875, էջ 257)։

¹ Տես Th. Noeldeke, Tabari, էջ 355՝ „ebendahn wurden auch an älteren Münzen von Pêrôz, Sohn des Jazdegerd, und von Kawâdh, Sohn des Pêrôz, geprägt, 12,000 Beutel gebracht, jeder Beutel zu 4000 Mithqâl in gemünztem Gelde, also im ganzen 48 Millionen Mithqâl“. էջ 376՝ „an gemünztem Geld 200.000 Beutel, enthaltend 800 Millionen Mithqâl“. էջ 377 „an gemünztem Geld 400.000 Beutel, enthaltend 1600 Millionen Mithqâl.“

² Տես Th. Noeldeke, Tabari, էջ 355 ծան. 1.

³ Հաշվելով դանձատուն տարված ամբողջ դրամարը 488 միլիոն մսիալ, Ar. Christensen-ն այդ ամբողջ դրամարի արժեքը հավասար է համարում մոսավորադեռ 336 միլիոն ֆրանկի։ Ուրեմն՝ 606/7 թվի պետական ընդհանուր յեկամուսը նա ընդունում է մոտ 300 միլիոն ֆրանկ, իսկ Պերդի ու Ֆավատի ժամանակներից մնացած հին դրամների արժեքը մոտ 36 միլիոն ֆրանկ։

Վերոհիշյալ յենթադրությունները, իմ կարծիքով, վիճելի չեն, վորովհետև չեն համապատասխանում վերև ճշտված կշիռների հաշիվներին:

Տարարիի վկայությունների մեջ «mithqāl»-ը, ինչպես տեսանք, գործ էածված վորպես կշիռ Սասանյան արծաթ «dirham»-ի Պարսկական այդ «mithqāl»-ը, ըստ յերևույթին, անսովոր էր արարական ժամանակներում, ուստի անհրաժեշտ է համարվել վերոհիշյալ գումարները հաշվել նաև արարական «dirham»-ով, վորի կշիռը յեղել է $\frac{7}{10}$ «mithqāl»: Հիմնվելով Բելադորիի վկայության վրա թ. Նյուդեհեկեն մատնացույց է անում, վոր կային տարրեր «dirham»-ներ, վորոնց կշիռը հավասար է յեղել 1 կամ $\frac{4}{5}$ կամ $\frac{1}{2}$ «mithqāl»-ի¹: Յիվ իրոք, արարական որինական «mithqāl»-ը, ինչպես հայտնի չէ, հավասար էր այժմյան $5\frac{2}{3}$ գրամի, որինական «dirham»-ը՝ $3,96\frac{2}{3}$ գրամի ($=\frac{4}{5}$ «mithqāl») և Աբգլմեկիքի «dirham»-ը՝ $2,83\frac{1}{3}$ գրամի ($=\frac{1}{2}$ «mithqāl») ²:

Տարարիի վկայություններում, իմ կարծիքով, ի նկատի չեն տոնված հենց այս վերջին հնագույն ժամանակի Աբգլմեկիքի «dirham»-ը, վորի հարաբերությունը Սասանյան «mithqāl»-ի կամ արծաթ գրամի հանդեպ գրեթե 7-ը առ 10-ն է՝ $2,83\frac{1}{3}$ և 4,08:

Նոր այս յենթադրությունը վնչ միայն վերանում է մարկերով ու ֆրանկներով հաշված գումարների անհասկանալի տարբերությունը, այլ և ստացվում է Սասանյան Պարսկաստանի 606/7 թվի ընդհանուր մուտքի համար տարրեր գումար: Ընդունելով «mithqāl»-ը վորպես Սասանյան դրամ մաքուր արծաթից և նրա կշիռը՝ 4,08 գրամ՝ այդ դրամն արծաթի իր պարունակութամբ համապատասխան պետք է համարենք այժմյան արծաթ ուղբու $22\frac{2}{3}$ կոպեկին: Սասանյան Պարսկաստանի յեկամուտը 606/7 թվին կլինի այս հաշվով $420.000.000 \times 22\frac{2}{3} = 95.200.000$ արծաթ ուղբի:

Իրապես, յեկամուտը կարող էր այդ գումարից մի վորք պակաս լինել, յեթե Սասանյան արծաթ գրամն ունեցած լիներ մաքուր արծաթի հետ վորոշ տոկոս խառնուրդ³:

2. «Ապուռիսի»

«Ապուռիսի» բառը հանդիպում է Շիրակավանի 1228 թվի արձանագրության հետեյալ հատվածում. «Ես արարակ Իւանէ և խոշակս վրաց և հայւոց թագոհի վասն յերկար կենդանութեան հարադատաց մերոց մանդատորթա խուլցէս Շահնշահի և ամիր սպասալար Աւագին թողաք զգեղիս Շիրակա զապուռիշի եւ զՋրսահին բաժն յորգեցէ յորդիք ազատ ի բաժէն» (տես Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, Ս.-Պետերբուրգ 1913, էջ 71):

¹ Tabari, էջ 255, ծանոթ. 1:

² Sies J. A. Deconrdemanche, Traité pratique des poids et mesures des peuples anciens et des Arabes, Paris 1909, էջ 25, 26, 27, 28 և 47:

³ Հայաստանի արքունի հարկերը մարդպանության շրջանումն նախորդ իմ աշխատության մեջ Սասանյան արծաթ գրամի դրամական արժեքը յես հավասար էյի համարել մասավորապես այժմյան 25 կոպեկին (էջ 11): Ինչպես տեսնում ենք, նրա արժեքն արծաթ 25 կոպեկից պակաս է և առ առավելն հավասար է $22\frac{2}{3}$ կոպեկի, յեթե Սասանյան այդ դրամը յենթադրենք մաքուր արծաթից:

Այս բառը, ինչպես հայտնի յե, դեռևս բավաբար կերպով մեկնված չէ՝ Մ. Եմինն «ապուռիչի» համարել և իր թարգմանություն մեջ դյուղի անուն՝ Апури¹, Հ. Ղևոնդ Ալիշանը «Շիրակի» մեջ նույն բառի մասին ունի հետևյալ յենթադրությունը՝ «քանզի ընդ ջրսահի յիշի՝ թուի նոյնպէս ջրոյ հարկ նշանակել ըստ ապ (ջուր) արաբացի բառի»², Յ. Կարստը «Դատաստանագիրք Սմբատի» իր աշխատություն մեջ «ապուռիչի և ջրսահին բաժն» թարգմանել և «Kanal und Schlensenzoll»³:

Պրոֆ. Հր. Աճառյանի «Հայերէն արմատական բառարանում» (Երևան 1926 թ.) «ապուռիչի» բառին տրված և հետևյալ բացատրությունը՝ «ջրի առու?» նորագյուտ բառ... բառս գտաւ առաջին անգամ Մառ, Сборн. мат. Кавк. 17, 194, որ և կցում է պրս. abriz «դռլլ, ջրաման, արտաքնոց» բառին. սակայն ոչ ձևով է նման և ոչ նշանակութեամբ:

«Հայաստանի արքունի հարկերը մարդպանության շրջանում» վերոհիշյալ իմ ուսումնասիրություն մեջ (հջ 21) յես լավագույնն հյի համարել յեղած լուսաբանություններից Յ. Կարստի յենթադրությունը, վերապահությամբ, իհարկե, վոր նրա բացատրությունը ևս չի կարելի ընդունել իբրև հաստատուն ու վերջնական:

Ինձ թվում և այժմ, վոր «ապուռիչի» բառը վորևե կապ չունի «առուի» վոչ ել «ջրի ու դռլի» հետ: Առաջարկում եմ այդ բառի հետևյալ նոր մեկնությունը:

«Ապուռիչի» պետք և կարգալ, իմ կարծիքով, «ապուռ իշի», իսկ «ապուռ» միջնադարյան «յապուր» հարկն և, վոր պահանջվել և անասունների ու ապրանքների անցուղարձի համար հատուկ տեղերում: «Յապուր» բառն այդ իմաստով գործ և ածված Լևոն Գ-ի 1288 թվի հրովարտակում. «Եւ յապուր որ տան ընդ յԱյաս ու ընդ Կուկլակ, նայ այսպես լիննայ, որ տան ի պրիսիմն ի յըղտայբեռն նոր դրամ քսան ու հինգ, և ի պրիսմէ կտաւն ի յըղտայբեռն նոր դրամ քսանուհինգ, և ի լեղակն ու յախայխիրն զարդ ի պըղպըղէն ու զընջպլէն ու ի պաղղամէն, ի յայլն ի յամենն տան ի յըղտայբեռն նոր դրամ քսան ու հինգ, տան ի ջորէբեռն նոր դրամ տասն և ինն, և ի յիշբեռն նոր դրամ տասն ու վեց» (Տէս Langlois V., Le trésor des chartes d'Arménie ou cartulaire de la chancellerie royale des Roupeniens, Venise 1863, հջ 157): Պրոֆ. Հր. Աճառյանն իր «Հայերէն արմատական բառարանում» «ապուր» բառը մեկնել և, իբրև փոխառություն արաբերենից՝ «արաբ. abūr «անցնիլ» բառից, ճիշտ ինչպես որ նոյն հարկի լա. ձևը passagium բառն նշանկում է «անցք» (հջ 461)⁴:

«Թողաք ղգեղիս Շիրակա զապուռ իշի»⁵ [այսինքն՝ զապուր իշո]

¹ Տես իմ աշատությունը՝ «Հայաստանի արքունի հարկերը մարդպանության շրջանում», Հ. Մ. Ն. Գիտություն և Արվեստի Ինստիտուտի Տեղեկագիր, № 1, Յերևան 1926 թ., հջ 21—22:

² Армянския надписи, Москва 1881, հջ 51:

³ Շիրակ, Վենետիկ 1881, հջ 91:

⁴ J. Karst, Sempadischer Kodex, Strassburg 1905, B. II, հջ 234:

⁵ Հայերէն արմատական բառարան, Հատ. Ա, Երևան 1926:

⁶ Արձանագրության ընթերցվածն աղճատված չէ՝ արդյոք արտագրության ժամանակ, լավագույնն և, անշուշտ, շրջոյ, վոր կարող և թերևս լինել ճիշտ ընթերցվածը:

պետք է, հավանորեն, հասկանալ այն իմաստով, վոր 1228 թվին իվանե աթաբեկը և նրա կլինը խոշակը Շիրակ գյուղն ազատել են իշաբեռնեբի «յապուր» հարկից: Վոր միջնադարյան *pedaticum* և *passagium* հարկը զոյությունն է ունեցել վոչ միայն Կիլիկիայում, այլ և բուն Հայաստանում 1228 թվին, այդ հաստատվում է, ուրեմն, հետաքրքիր այս վկայությամբ, յեթի մեր նոր լուսարանությունը համարվի ընդունելի:

Յ. «Ձքփաբար», «չքփաբար»

Այս անձանոթ բառը դործ է ածված Սերևոսի և Ստեփանոս Ասողիկի համապատասխան հատվածներում, վոր վերաբերվում են այսպես կոչված «Պարսից ժողովին»:

1. «Պատմութիւն Սերէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», հրատ. Բ. Պատկանյանի, Ս. Պետերբուրգ 1879, էջ 122. «Իսկ որք զՔաղկեդոնին և զՎրաց և զԱղուանից կաթողիկոսն, և այլ բազում եպիսկոպոսունք ի Յունաց կողմանէ, և իշխանք՝ որք եկեալ էին ի ծառայութիւն պարսից թագաւորին, որով և չքփաբարն իսկ հրամայեաց տալ»:

2. «Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական», հրատ. Ստ. Մալխասյանցի, Ս. Պետերբուրգ 1885, էջ 96. «Իսկ որք զՔաղկեդոնին Իվերիոյ և Աղուանից կաթողիկոսն, որ էր ի Փայտակարան, ի դրան արքունի, և այլք ոմանք եպիսկոպոսունք և երիցունք քաղաքաց, որ ի Յունաց կողմանէ, և իշխանք, որք եկեալ էին ի ծառայութիւն թագաւորին Պարսից, որոց զչփաբարն իսկ հրամայեաց տալ»:

Ստեփան Մալխասյանի հրատարակած Ասողիկի ծանոթություններում (էջ 96 և 351—352) առաջ են բերված այդ անձանոթ բառի ձևազրական տարբեր ընթերցվածները:

1) Ասողիկի առաջին տպագրության մեջ (Փարիզ 1859, էջ 97) «զփաբարն», 2) Կ Յեղյանցի ձևազրում՝ «զչփաբարն», 3) Բրոսսեի ձևազրում՝ «զչքփաբածառ»:

Կարապետ վրդպ. Շահնաղարյանցը, Ասողիկի առաջին տպագրության հրատարակիչը, յենթադրել և առանց վորեք հիմքի, վոր «փաբար» բառը նշանակում է գույն՝ «ուռճիկ, թոշակ» (Փարիզ 1859, էջ 211 ծան. 59):

Ասողիկի ֆրանսերեն թարգմանության մեջ է. Դյուլորյեն, հետևելով, ըստ յերևութին, Կ. Շահնաղարյանցին, նույն բառը թարգմանել է *provisions* («il leur fit fournir des provisions», Ed. Dulaurier, Histoire universelle par Etienne Asoghig de Daron, première partie, Paris 1883, էջ 125 և ծան. էջ 192):

Սերևոսի պատմության առաջին և յերկրորդ տպագրությունները, ինչպես և Պետերբուրգի Դիտությանց Ակադեմիայի գրչագիր որինակը, ունեն «չքփաբարն» ընթերցվածը (Կոստանդնուպոլիս 1851 և Ս. Պետերբուրգ 1879, էջ 122), վորի հավանական նշանակությունը լուսաբանված է Բ. Պատկանյանի հետևյալ ծանոթության մեջ՝ «թուի լինել պարսիկ բառ՝ *pākār* կամ *pāikār*, որ նշանակէ զհարկապահանջն և զտուրս հարկաց ի պէտս կալուածատեսարց» (Սերէոս, 1879, էջ 122 ծան.):

Գ. Պատկանյանի ստուգաբանական այս բաղդատությունը կարևոր է և, անտարակույս, ավելի հիմնավոր և քան մյուս քմահաճ յենթադրությունները:

Ընդունելով «փայքար» բառի ծագումը պարսկերեն *pāikār*-ից, անհավանական չի չինի, իմ կարծիքով, այդ բառը համապատասխան համարել պեկար, բեկար-ին, վոր քննությունն է առնված «Հայաստանի արքունի հարկերը մարդպանություն շրջանում» իմ նախորդ աշխատության մեջ (եջ 32—37):

Լեզվական տեսակետից պարս. *pāikār* բառի տարրեր տառադարձությունը հայերենում՝ «փայքար» և «պեկար»՝ այնքան ել ղժվար բացատրելի չէ: Հայտնի յե արդեն, վոր պարսկական յ և Կ-ն հայերենում տառադարձվել են պ և կ կամ փ և ք. որինակ՝ կուստ և քուստ, պարտակ և փարտայ, կիշտ և քէշ, կերտել և քերթող, վեսակար բայց պայքար, պաշտպան բայց փուշտիպան:

«Փայքար»-ի նույնացումը «պեկար» հարկի հետ հարմար է նաև այն տեսակետից, վոր Սեբեոսի և Ասողիկի վերոհիշյալ հատվածները ստանում են նոր այս լուսաբանությունը հավանական ու հասկանալի իմաստ:

Սեբեոսի և Ասողիկի պատմելով, «Պարսից ժողովում», վոր տեղի յեր ունեցել Պարսից խոսքով Բ. Պարվեզի ժամանակ (590—628 թ.), ուզիլ եր ճանաչվել հայոց հավատը: Ժողովից հետո, ասում են նույն պատմիչները, խոսքով Բ-ը հրաման է տվել քանդել նեստորական յեկեղեցիները և սպանել նեստորական յեպիսկոպոսներին: Իսկ քաղկեդոնականներին՝ Վրաց և Աղվանից կաթողիկոսներին և Յունաց կողմից՝ յեկած յեպիսկոպոսներին ու իշխաններին՝ նա հրամայել է տալ մինչև անգամ «չըփայքարն»:

Այս տեղեկության պատմական ճշտությունը կարող է գունավորված ու վիճելի համարվել: Մեղ հետաքրքրում է այստեղ վեջ թե խնդրի պատմական կողմը, այլ միայն «չըփայքար» բառի նշանակությունը:

Եդ. Դյուլորյեն Ասողիկի ֆրանսերեն թարգմանության մեջ կարծում է, վոր Ասողիկը քաղկեդոնականներին վերաբերյալ այդ հատվածում ուզեցել է ցույց տալ խոսքով Բ-ի անաչառությունը դեպի բոլոր Պարսկաստանին հպատակ քրիստոնյա համայնքները. իրը թե խոսքով Պարվեզը, ճանաչելով հայոց միաբնակ դավանության գերադանցությունը իր յերկրներում, ըստ յերեվոյթին, բարեմիտ վերաբերմունք է ունեցել նաև քաղկեդոնական հոգևորականության հանդեպ և հրամայել է հայթհայթել նրանց պաշարը (եջ 192, ծան.):

Ինձ թվում է, վոր կարիք չկա կանգ առնել Եդ. Դյուլորյեի այս բանազրույթի բացատրության վրա:

Սեբեոսի և Ասողիկի համապատասխան հատվածներում, յինչպես տեսանք տրված են նախ վորոշ տեղեկություններ հալածանքների մասին նեստորականների դեմ և ապա ակնարկված է, հավանորեն, վեջ թե խոսքով Բ-ի բարյացակամությունը քաղկեդոնականների հանդեպ, այլ սրանց նվաստ

¹ Յոթերորդ դարի առաջին տասնամյակում պարսիկները նվաճել էյին Բյուզանդական Հայաստանը և կայսրության արևելյան շրջանները:

ու ստորագաս վիճակը հայ միարնակ յեկեղեցու համեմատությամբ: Որով և չըփայլեարն իսկ հրամայեաց տալ՝ Սեբեոսի խոսքերը, մեր կարծիքով, պետք է հասկանալ հենց այդ իմաստով՝ իրրև նվաստացուցիչ մի փաստ քաղկեդոնական յեկեղեցու նկատմամբ: Արդ՝ վերադբելով «փայլար» անծանոթ ըստին «պեկար»-ի նշանակություն, մենք իրոք վոր ստանում ենք Սեբեոսի վկայության իմաստալից ու բավարար մի նոր լուսաբանություն:

Մարգպանական Հայաստանի արքունի հարկերն ուսումնասիրելիս՝ յիս յենթադբել եյի վոր հայ հոգևորականությունը ձեռք է բերած յեղել Հաղկերտ Բ-ի հալածանքներից հետո հարկային ինչ վոր արտոնություն: Նա աղատ է յեղել, ըստ յերևույթին, զլիսահարկից, բայց պարտավոր է յեղել «տալ յարքունիս» «հաս» կամ «պեկար» հարկը, վոր յես յենթադբել եյի հողային հարկ¹:

Արդ՝ Սեբեոսի վկայության մեջ՝ «որով և զչըփայլարն» իսկ հրամայեաց տալ՝ անհավական չի լինի, իմ կարծիքով, մեկնել այն իմաստով, վոր քաղկեդոնական յեկեղեցուց պահանջվել է նույն իսկ «չըփայլար»-ը, այսինքն՝ բացի «փայլար-պեկար» հողային հարկից նաև այն հարկերը, վոր «պեկար» չեյին:

Յեթե ընդունելի համարվի նոր այս յենթադրությունը, այդ դեպքում՝ «փայլար»-ը կամ «պեկար, բեկար»-ը, վոր մատենադրական հին վկայություններում ունեցել է, հավանորեն, հողային հարկի նշանակություն, համապատասխան պիտի լինի վոն թե պարսկերեն bekār-ին, այլ paikār-ին վորն ըստ Բ. Պատկանյանի նշանակել է թե «հարկապահանջ» և թե «զտուրս հարկաց ի պէտս կալուածատեարց», այսինքն՝ հողային հարկ:

Անհնարին չե, իմ կարծիքով, վոր «փայլար, պէկար»-ը հողային հարկի նշանակությամբ (= paikār) և «բեկար»-ը պարտադիր ձրի աշխատանքների իմաստով (bekār) տարբեր փոխառություններ լինեն պարսկերենից՝ շփոթված իրար հետ հետադարձում հնչյունական նմանության պատճառով:

4. «Դահեկան»-ը Շիրակացու Թվաբանական Խնդիրների մեջ

Անանիս Շիրակացու «Յաղագս հարցման և լուծման» գրվածքում չորս անգամ հանդիպում է «դահեկան»-ը, իրրև այն ժամանակվա դրամ (հարցումն է, ժա, մե, ժթ)²:

Հ. Որբելին իր հրատարակության մեջ այդ «դահեկան»-ը համարել է արծաթ դրամ՝ «серебряная монета денарий» (Լջ 64):

Հ. Որբելիի այս յենթադրությունը, իմ կարծիքով, հավանական չե:

Շիրակացու Թվաբանական Խնդիրներում «դահեկան»-ը վոն թե արծաթ դրամ է, այլ գործ է անված բյուզանդական վոսկի դրամի համար, վորի

¹ Հայաստանի արքունի հարկերը մարգպանության շրջանում, էջ 31, 34 և 35:

² Սեբեոսի առաջին և յերկրորդ տպագրություններն ունեն, ինչպես տեսանք, «չըփայլարն» ընթերցվածը, իսկ Ասողիկի յերկրորդ տպագրությունը՝ «զչփայլարն»: Ի նկատի առնելով նույն բառի վերև առաջ բերված ձեռագրական աարբերակները՝ յես լավագույն եմ համարում «չըփայլարն» ընթերցվածը:

³ Տես I. A. Орбели, Вопросы и решения вардапета Анании Ширакца, Петроград 1918, էջ 18, 22, 23, 25:

կշիռը Շիրակացու ժամանակ պետք է լիներ, իրոք, մեկ «դահեկան», այսինքն՝ 4 գրամ $53\frac{1}{3}$ սանտիգրամ: Այդ վոսկի դրամը, ինչպես հայտնի չի, անվանվում էր solidus, nomisma, aureus և դանազան դարաշրջաններում ունեցել է նաև այլևայլ տարբեր անուններ ու յերեմն նաև տարբեր կշիռ:

Անանիա Շիրակացին հենց ինքը «Յաղագս կշուոց և չափուց» իր գրվածքում ասում է, «նոմիսմայ ըստ Հոովմայեցուոց դահեկանն անուանի» (Ս. Պետ. 1877, հջ 28): Վենիտիկի ձեռագիրներից ք որինակը դահեկանի մասին ունի հետևյալ հավելվածը.

«Դահեկանն մի ոսկի է, որոյ կշիռն յամենայն ազինս մի և նույն է, և թե ուրեք գտանիցի պակաս, արտաքոյ քանակին ոսկւոյն է. զոր գաղտ անուղդայք արարեալ են» (տես Հար. վարդ. Ավգերյան, «Բացատրութիւն չափուց և կշուոց նախնեաց», Վենետիկ 1821, հջ 27 ծանոթ. 2):

Եւ, իրոք, մեր հին մատենագրության մեջ «դահեկան»-ը մեծ մասամբ գործ է ածված վոսկի դրամի իմաստով:

Հին Կտակարանի հայերեն թարգմանության մեջ «դահեկան» են թարգմանված բնագրի chrysus-ը և nomisma-ն, վոր վոսկի դրամ են¹: «Դահեկան»-ը արծաթ denarion-ի իմաստով հանդիպում է, գլխավորապես, Ավետարանի թարգմանության մեջ²: Ըստ յերեռւթիւն, Ավետարանի այդ «դահեկան»-ին (denarion) և վերաբեմում Շիրակացուն վերագրված Վենետիկի գ և ե որինակների վկայությունը՝ ըստ ժամանակին դահեկանն Կ ասարիոն էր. և դահեկանն էր արծաթի³: Սակայն «դահեկան»-ի այս վերջին նշանակությունը՝ իբրև արծաթ denarion, վոր հանդիպում է առավելապես թարգմանական գրականության մեջ, բացառիկ է ու արտասովոր:

«Դահեկան»-ը, ինչպես տեսանք, հիշատակված է նաև Անանիա Շիրակացու թվաբանական հարցումներում: Հետաքրքիր է, առանձնապես, նրա ԺԵ-րդ հարցումը.

«Ձի մի կայր ինձ ազնիւ, վաճառեցի և գնոցն չորրորդ մասինն կովեան գնեցի, եաւթներորդ մասինն այծեան, և մետասաներորդ մասինն եզնի, և երեք հարիւր և ութնտասն դահեկանի ոչխարս առի: Արդ գիտեմ թէ ընդ ամենայն քանի՞ դահեկան լինի» (տես Вопросы и решения, հջ 23): Հարցման լուծումից իմանում ենք, վոր ազնիվ ձին վաճառվել է 616 «դահեկան»-ի: Այդ գնի չորրորդ մասով (= 154 դահեկան) գնված են յեզել կովեր, $\frac{1}{7}$ -րդով (= 88 դահեկ.)՝ այծեր, $\frac{1}{11}$ -րդով (= 56 դահեկ.)՝ յեզներ և 318 «դահեկան»-ի՝ վոչխարներ:

¹ Դահեկան = chrysus տես Ծնն. Ղ. 28, ԽԾ. 22, Թիւք Ղ. 14, 20, 26, 86 Գ. Թադ. Ժ. 16, Դ. Թադ. Ե 5, Ա. Մնաց. ԻԹ. 7, Բ. Մնաց. Թ. 15, 16, Նեեմի Ղ. 71, — դահեկան = nomisma՝ տես Ա. Մակ. ԺԵ. 6:

Հին Կտակարանի մեջ «դահեկան» է թարգմանված նաև հունարեն drachme-ն հետևյալ հատվածում. «և եղև իբրև դադարեցին ամենայն ուղտքն յըմպելոյ, և էտո այրն գինդս ոսկիս մի մի ըստ դահեկանի ձուլոյ» (Ծնն. ԻԴ. 22): Այստեղ «դահեկան»-ը կշռի իմաստով է, բայց թարգմանությունը ճիշտ չէ, վորովհետև drachme-ն իր կշռով տարբեր էր «դահեկան»-ից:

² Դահեկան = denarion տես Մատթ. ԺԸ. 28, Ի. 2, 9, 10, 13, ԻԲ. 19, Մարկ. Զ. 37, ԺԲ. 15, ԺԴ. 5, Ղուկ. Ղ. 41, Ժ. 35, Ի. 24, Յովհ. Զ. 7:

³ Տես Հար. Ավգերյան, «Բացատրութիւն չափուց են» հջ 38, նաև Անանիայի Շիրակունւոյ, Մնացորդք բանից, Ս. Պետերբ. 1877, հջ 33:

Յեթե ընդունենք «դահեկան»-ն իբրև արծաթ դրամ և նրա կշիռը մեկ «դահեկան», այն է՝ 4.53¹/₃ գրամ¹, յեզների դնման համար կըստացվի ընդամենը՝ 56 «դահեկան», վոր այժմյան դրամով պետք է լինի մոտ 14 արծաթ ուրլի²:

Արդ՝ յենթադրելով յեզների այս դինը, մոտավորապես, իրականին համապատասխան՝ հարկադրված ենք լինելու յեզրակացնել, վոր յեզի գինը Շիրակացու ժամանակ յեղել է մի քանի ուրլի:

Բոլորովին այլ հետևություն կստացվի, յեթե «դահեկան»-ն ընդունենք այստեղ իբրև վոսկի դրամ:

Այս վերջին յենթադրությունը թվում է ինձ ավելի քան հավանական, վորովհետև Շիրակացու «Յաղագս կռոց և չափուց» դրվածքի վերոհիշյալ վկայություններից կարելի յեր յեզրակացնել, վոր «դահեկան»-ը, ինչպես հնադուլն հայ պատմագիրների, որինակ, Յեղիշեյի, Սերետսի, Հովհան Մա-միկոնյանի մոտ, նույնպես և Շիրակացու յերկերում, վաճ թե արծաթ, այլ վոսկի դրամ է, ամենայն հավանականությամբ, բյուզանդական solidus-ը, վորի իսկական կշիռը պետք է լիներ մեկ «դահեկան», այն է՝ 4.53¹/₃ գրամ:

Ի նկատի առնելով «դահեկան»-ի և այժմյան վոսկի ուրլու կշիռները, կարելի յե վորոշել նրանց կշիռների հարաբերությունը, ընդունելով, իհարկե, վոր «դահեկան»-ը ևս լիակշիռ եր և պարունակում եր, իրոք, իր մեջ 4.53¹/₃ գրամ մաքուր վոսկի:

Լիակշիռ և լիագին «դահեկան»-ն համապատասխան կլինի այս հաշվով 5 ուրլ. 85 վոսկի կոպեկի, վորովհետև ուսական 15 ուրլիանոցը, պարունակում է իր մեջ 11,612 գրամ մաքուր վոսկի: Բյուզանդական լիտրը, ինչպես հայտնի յե, 72 «դահեկան» եր և նրա կշիռը՝ 526,4 գրամ³. ուրեմն կռի տեսակետից նրա համարժեքը այժմյան վոսկի դրամով կլինի 421 ուրլի 64 կոպ.

Այսպես ել հենց հաշվել են բյուզանդական solidus-ի և բյուզանդական վոսկու լիտրի դրամական արժեքը յեվրոպական նորագույն յերկերում: Որինակ, Շարլ Դիլը, մատնանիշ անելով, վոր Հուստինյան կայսեր գահակալության ժամանակ պետական գանձարանում յեղել է 320.000 ֆունտ վոսկի՝ այդ դումարը համապատասխան է համարում մոտ 360.000.000 վոսկի ֆրանկի⁴. Ուրեմն՝ նա ևս բյուզանդական 1 լիտր կսմ ֆունտ վոսկին հավասար է համարում մոտ 1125 ֆրանկի, այսինքն՝ 421 ուրլու. կոպեկ-

¹ Տես վերև եջ 30:

² 4.08 գրամ Սասանյան արծաթ «դրամը» հավասար եր, ինչպես տեսանք, 292³/₄ արծաթ կոպեկի. ուրեմն՝ 4.53¹/₃ գրամ արծաթ «դահեկան»-ը հավասար կլինի մոտ 25 կոպեկի, իսկ 56 «դահեկան»-ը՝ մոտ 14 արծաթ ուրլու:

³ Տես վերև եջ 30:

⁴ Charle Diehl, Justinien et la civilisation byzantine au VI siècle, Paris 1901, եջ 310: Նման հաշիվ անում է նաև P. M. Sikes-ը, 533 թվի ղաջնադրությամբ Բյուզանդիան վճարելու յեր Սասանյան Պարսկաստանին հովկասյան անցքերը և ամրությունները պահպանելու համար 11.000 Բյուզանդական ֆունտ վոսկի: Sikes-ը այդ դումարը հավասար է համարում մոտ ¹/₂ միլիոն ֆունտ ստերլինգի, վոր մոտավորապես համադրատասխան է վերոհիշյալ հաշիվներին:

ներով: Շարլ Դիլի այս աշխատության ուսուցիչն հրատարակության մեջ 350 միլիոն ֆրանկը վերածված է ուսական դրամի. «вступив на престол Юстиниан нашел в государственном казначействе огромную запасную сумму в 320.000 фунтов золота, т.е. около 120 миллионов рублей на наши деньги»¹: Հասկանալի է, թե ինչու թարգմանիչը հարկ է համարել փոխել բնագիրը: Հայտնի է, Վոր ֆրանսական 40 ֆրանկը պարունակում է իր մեջ նույնքան մաքուր վոսկի, վորքան և ուսական 15 ուլերին ($= 11,612$ գրամ): Ֆրանսական վոսկի ֆրանկը հավասար լինելով $\frac{3}{8}$ -րդ վոսկի ուլերու, 360 միլիոն ֆրանկը համապատասխան կլինի վոսկի թե՛ մոտ 120 միլիոն ուլերու, այլ $360.000.000 \times \frac{3}{8} = 135$ միլիոն վոսկի ուլերու, վոր իբրև կլոր թիվ միանգամայն համապատասխանում է վերև ճշտված «դահեկան»-ի և բյուզանդական լիարի դրամական արժեքներին²:

Ընդունելով լիակշիռ «դահեկան»-ը, վոր պարունակում էր իր մեջ $4,53\frac{1}{3}$ գրամ մաքուր վոսկի, հավասար 5 85 վոսկի ուլերու կամ 15,60 վոսկի ֆրանկի, անհրաժեշտ է ի նկատի ունենալ, վոր նրա մեջ մաքուր վոսկին կարող էր յերբեմն վորոշ տոկոս պակաս լինել $4,53\frac{1}{3}$ գրամից խառնուրդի (алгатыра) պատճառով:

Այդ դեպքերում, բնականաբար, համապատասխան տոկոսով պակաս կլինի նաև «դահեկան»-ի ու այժմյան վոսկի դրամների կշռական մատնանշված հարաբերությունը: Մեր յեղրակացությունը, վոր «դահեկան»-ը հավասար է 5 ուլերի 85 կոպեկի, վերաբերվում է, ուրեմն, լիակշիռ այն «դահեկան»-ին, վորի մեջ մաքուր վոսկու քանակը $4,53\frac{1}{3}$ գրամ էր:

5. «Սարգիոն» յեվ «ասպարիոն»

Կշիռների վերաբերյալ Վենետիկի ձևագիրների գ և ե որինտիները, վորոնք թվահամարները նշանակված չեն Հ. Ավգերյանի աշխատության մեջ, ունեն հետևյալ ուշագրավ հատվածները.

¹ Տե՛ս Շարլ Դիլ, Юстиниан и византийская цивилизация в VI веке, С. Пет. 1908, էջ 318: Նույն այս հաշիվն ունի նաև ուս բյուզանդագետ Յ. Կուլակովսկին. տե՛ս Кулаковский Ю., История Византии, т. 1, Киев 1913, էջ 521. «(Анастасий) доказал блестящее состояние финансов империи тем, что оставил в наследие своему преемнику огромный фонд в количестве 320 тысяч фунтов золота, т. е. около 120 миллионов рублей на наши деньги.»

² Ֆ. Ուսպենսկին, խոսելով Հուստինյան կայսեր СLII նովելայի մասին, վերով կարգադրված է յեղել ուղարկել տեղերը հարկերի մանրամասն ցուցակները՝ առաջ է բերում տուգանքների գումարները, վոր վճարելու էյին զանցառու պաշտոնյաները, «если в установленный нами срок означенныя подробныя росписи податей не будут разосланы по местам, то стоящие во главе префектур чины подвергаются пене в 30 золотых литр, начальники провинций в 20 литр кн» (տե՛ս История Византийской Империи, т. 1, Пет., էջ 593):

Ծանոթության մեջ 30 վոսկի լիտրը նա համապատասխան է համարում մոտ 10 000 ուլերու: Այս հաշվով բյուզանդական լիտրը հավասար կլինի $333\frac{1}{3}$ ուլերու, իսկ nomisma-ն կամ solidus-ը 4 ուլեր. 63 կոպ. Ի՜նչ փաստերի ու զիտողությունների վրա յե հիմնված այս հաշիվը՝ ծանոթության մեջ բնավ բացատրված չի: Նույն աշխատության մի ուրիշ հատվածում X-րդ դարի nomisma-ն կամ պերպերս-ը հավասար է համարված մոտ 4—5 ուլերու. տե՛ս Ист. Виз. Имп., էջ 809:

1. «Տաղանդն կըռոյ անուն է որ է 6իե լիար. և 6իե լիարն ինն ա ասարիոն ըստ համարոյ¹»:

2. «Մոնաթն² ինն ա ասարիոն է. ըստ հելլենականին զեփտոն կոչի, որ է անօսր, որ է դանգ. զոր Գրիստոս հինգ ձագի վաճառ ասաց. և ըստ Եւրայեցւոց ասարիոն՝ նուաղութիւն կոչի: Ըստ ժամանակին դահեկանն կ ասարիոն էր. և դահեկանն էր արծաթի³»:

Այս հատվածներում հիշված «ասարիոն»-ի առթիվ Հ. Ավդերյանն ունի հետևյալ ծանոթությունը. «Գ (օրինակ) ասպարիոն, որ է վրիպակ գրչի. զի պարտ է լինել ասսարիոն կամ ասարիոն» (Եջ 38): Հ. Ավդերյանի այս ուղղումը, իմ կարծիքով, վիճելի չէ: Հ. Ավդերյանն ուշադրութեան չի առել այն, Վոր «տաղանդ»-ը 9000 ասարիոն չէր, այլ 430.000: Բնագրի վերոհիշյալ ուղղումով ստացվել է մի հաշիվ, Վոր խիստ դժվար է բացատրել:

Ճիշտ է՝ «ասարիոն»-ը մատենագրական մեք աղբյուրներում հաճախ ստացվում է տարբեր իմաստով՝ կամ իբրեւ յերկու դարեհատի կշիռ կամ իբրեւ դրամ, բայց այս վերջին իմաստով, Վորքան ինձ հայտնի չէ, նա շատ փոքր դրամ է, մինչդեռ վերոհիշյալ հատվածներում տաղանդի $\frac{1}{9000}$ -րդ մասն է, ուրեմն՝ հավասար է մեկ դահեկան»-ի ($=4.53\frac{1}{3}$ դրամ):

Հայերեն Ավետարանի մեջ, օրինակ, հունարեն *assation*-ը Վորք դրամ է և թարգմանված է «դանգ» (տես Մատթ. Ժ. 28 և Ղուկ. ԺԲ. 6):

Յեթե «տաղանդ»-ը ինն ա «ասարիոն» կամ «ասպարիոն» եր «ըստ համարոյ», հավանական կլլինի յենթադրել, Վոր այս վերջինը դրամի տնուն է: «Ըստ թուոյ» և «ըստ համարոյ» խոսքերով կշիռների վերաբերյալ զրվածքներում ակնարկված են, իմ կարծիքով, դրամները⁴:

Արդ՝ հնարավոր չէ՞ արդոք իբրեւ լավագույն ընդունել Գ օրինակի «ասպարիոն» ընթերցումը: Այս վերջին յենթադրութեամբ հասկանալի չէ դառնում «տաղանդ»-ի և «ասպարիոն»-ի կշռական հարաբերութեւնը. Վոր այլապես մութ է ու դժվար բացատրելի: Դրամական այդ նոր միավորի գոյութեւնը անընդունելի չպիտի թվա, Վորովհետեւ «ասպարիոն»-ն անհայտ մի բառ չէ բյուզանդական հունարենում:

Հայտնի չէ, Վոր թյուրքիայում գոյութեւն և ունեցել «ասպր» դրամը: Այս «ասպր» բառի ծագումը յենթադրում են նոր հունարեն «*aspros*»-ից, Վորը նշանակել է «սպիտակ»: Իբրեւ ապացույց այս լուսաբանութեան՝ մատնացույց են անում, Վոր նույն «ասպր» դրամը թուրքերենում անվանվել է նաև *akceha*, Վորի արմատն է *ak*, այսինքն՝ «սպիտակ»:⁵

Արդ՝ յեթե թուրքերեն «ասպր»-ը փոխառութեւն է հունարենից և գործ է ածվել արծաթ դրամի իմաստով, հավանական կլլինի, իմ կարծի-

¹ Տես Հար. Վարդ. Ավդերյան, Բացատրութեւն, Եջ 37-38. նաև «Անանիայի Շիրա-կունւոյ. Մնացորդք բանից», Եջ 33:

² Մոնաթ կամ մոնադ, ինչպես հայանի չէ, դործ է ածվել տաղանդի իմաստով. աւտ. Անանիայի Շիրակ., Մնացորդք բանից, 29, նաև Հ. Ավդերյան, «Բացատրութեւն չափուց և կշռոց նախնեաց», Եջ 26: «Տաղանդն 6իե լիար է. զոտ թուողք մոնադ կոչեն»:

³ Հմմտեալ Շիրակացու հետեյալ հատվածը «Եւ պայուստիկն ծ լիար է, որ է ու ոստեր, որ լինի ու դրամի կշիռ և թիւ» (աւտ. Անան. Շիրակ., Եջ 29. Բացատրութեւն, Եջ 26):

⁴ Տես «Grande Encyclopédie» հանրագիտական բառարանում «*aspre*» բառը:

քով, յենթադրել, վոր նույն այդ բառը Բյուզանդիայում ևս տարածված է յեղել իբրև արծաթ դրամ:

«Ասպարիոն» ընթերցվածը վերահիշյալ ձեռագիրներում կարող է հենց ուշագրավ մի վկայություն համարվել, վոր այդ բառն իբրև արծաթ դրամի անուն գոյություն է ունեցել նաև Հայաստանում, հավանորեն, այն դարաշրջանում, յերբ գրված են յեղել «զ և Ե որինակ» Վենետիկի ձեռագիրները:

Այս ձեռագիրների մասին Հար. վարդ. Ավգերյանը «Յառաջաբանություն» մեջ հաղորդում է հետևյալ տեղեկությունը.

«զ և Ե օրինակք ընտիր են գրչութեամբ, և միաբան ունին ղկշիռս և զչափս. միայն երբալի տարբերին յառաջնոյ անտի. նախ՝ զի համառօտագոյն են քան զնա. Երկրորդ՝ չունին ի ճակատու զանուն Անանիայի, և ոչ վերնագիր ի վերայ իւրաքանչիւր կշռոց և չափուց. և երրորդ՝ յաւելուն ի սկզբան անդ ղասպարիսական չափս: Վասն որոյ և մեք զսոցա ևս զուղղագիր օրինակ արժան համարեցաք առանձին դնել ի նախադրունս գործույս զկնի Ասպարիսական չափուց Խորենացւոյն» (Բացատրութիւն չափուց և կշռոց, Յառաջաբանութիւն, Էջ 5):

Ինչպես յերեւում է այս տեղեկությունից՝ զ և Ե օրինակներն «ընտիր են գրչութեամբ», ուստի և այս ձեռագիրները կարող են յավական հին լինել: Արդ՝ ի նկատի ունենալով նոր հունարեն *aspros*-ի նշանակություն իբրև «սպիտակ», նաև «ասպարիոն»-ի վերահիշյալ կշիռը՝ հավասար «զահեկան»-ի ($= \frac{1}{9000}$ տաղանդի)՝ կարելի յե, ի՞նչ կարծիքով, յենթադրել, վոր «ասպարիոն»-ն իբրև բյուզանդական հատուկ դրամ յեղել է, հավանորեն, արծաթ դրամ, վորի հնագույն կշիռը համաձայն վերահիշյալ վկայությունների պետք է ընդունել՝ $4 \frac{53}{100}$ գրամ:



A 2539

20285







[504]

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0068280

ЦЕНА

111
2539